ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«____» _____ 2020 թ. N _____-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 502-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի «Մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի սուբսիդավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 54-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 502-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2-րդ կետի՝

ա. 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) ***շահագործող-ջրօգտագործող՝*** իր գյուղատնտեսական արտադրությունը վարող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը սահմանված կարգով մեխանիկական եղանակով ոռոգման համար շահագործում է ջրամատակարարի կողմից չշահագործվող համակարգ, և գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգումն իրականացնում է ոռոգման ժամանակակից ջրախնայողական տեխնոլոգիաներով (բացառությամբ բանջարաբոստանային մշակաբույսերի և խաղողի այգու) և (կամ)

անասնապահական գործունեության իրականացման համար մեխանիկական ոռոգման համակարգից օգտագործում է ոռոգման ջուր.»,

բ. 7-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) ***ջրօգտագործող (հետագայում՝ բաժանորդ)՝*** իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգումն իրականացնում է ոռոգման ժամանակակից ջրախնայողական տեխնոլոգիաներով (բացառությամբ բանջարաբոստանային մշակաբույսերի և խաղողի այգու) և (կամ) անասնապահական գործունեության իրականացման համար մեխանիկական ոռոգման համակարգից օգտագործում է ոռոգման ջուր և սահմանված կարգով հանդիսանում է ջրամատակարարի հետ ջրօգտագործման պայմանագիր կնքած անձ.».

2) աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ ***Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Հ/Հ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԱՀ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ		
2.	ԱՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ		
3.	ԱՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ		
4.	ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ		
5.	ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ	Ա. ԼԱՉԱՐՅԱՆ		

Առաջարկությունները և առարկությունները՝ _____

_____

_____

_____

_____

_____

_____

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարար *Ա. Բախշիյան*

«____» _____ 2020 թ.

Հավելված N 1
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի _____-ի
N _____ -Ն որոշման

«Աղյուսակ

ՆՈՐՄԵՐ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱՎԱՅՐԱՅԻՆ ԳՈՏՈՒ ՇԱԳԱՆԱԿԱԳՈՒՅՆ, ՄԻՋԻՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ, ՄԻՋԱԿ ԿԱՎԱ-ԱՎԱԶԱՅԻՆ ԵՎ ԱՎԱԶԱ-ԿԱՎԱՅԻՆ ՀՈՂԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՋՐՄԱՆ ՈՒ ՈՌՈԳՄԱՆ, ԱՆԱՄՆԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՎՈՂ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ

Ծովի մակարդակից մինչև 500 մետր բարձրություն

Հ/հ	*Մշակաբույսը*	*Ջրումների քանակը*	*Ջրման նորմը մ³/հա*	*Ոռոգման նորմը մ³/հա*
1	Եգիպտացորեն	4	750	3000
2	Արևածաղիկ	5	700	3500
3	Կարտոֆիլ (վաղահաս)	5	650	3250
4	Ծխախոտ	12	650	7800
5	Բանջարաբոստանային	16	500	8000
6	Խաղողի այգի	5	1100	5500
7	Պտղատու այգի	5	1000	5000
		Արաքսի հովիտ տեղամաս		
1	Խաղողի այգի	10	1100	11000
2	Պտղատու այգի	10	1000	10000

Ծովի մակարդակից 500-900 մետր բարձրություն

Հ/հ	*Մշակաբույսը*	*Ջրումների քանակը*	*Ջրման նորմը մ³/հա*	*Ոռոգման նորմը մ³/հա*
1	Եգիպտացորեն	3	750	2250
2	Արևածաղիկ	4	700	2800
3	Կարտոֆիլ (վաղահաս)	4	600	2400
4	Ծխախոտ	10	600	6000
5	Բանջարաբոստանային	12	450	5400
6	Խաղողի այգի	4	1100	4400
7	Պտղատու այգի	4	1000	4000

Ծովի մակարդակից 900 մետրից բարձր

Հ/հ	*Մշակաբույսը*	*Ջրումների քանակը*	*Ջրման նորմը մ³/հա*	*Ոռոգման նորմը մ³/հա*
2	Եգիպտացորեն	3	700	2100
3	Արևածաղիկ	3	700	2100
4	Կարտոֆիլ (վաղահաս)	4	550	2200
5	Ծխախոտ	6	550	3300

6	Բանջարաբոստանային	8	450	3600
8	Խաղողի այգի	-	-	-
9	Պտղատու այգի	3	1000	3000

Անասնապահական գործունեության իրականացում

Հ/հ	***Անվանումը***	***Քանակը***	***Օրական մեկ պայմանական գլխի համար ջրի սպառման նորմը մ³/գլուխ***	***Ամսական կտրվածքով մեկ պայմանական գլխի համար ջրի սպառման նորմը մ³/գլուխ***
1	Պայմանական անասնագլխաքանակ	1	0,1	3

»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱՉԱՐՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 502-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Անհրաժեշտությունը

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 502-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման և ոռոգման ժամանակակից ջրախնայողական տեխնոլոգիաներ չկիրառող, սակայն պարենային ապահովվածության բարձրացման համար առանցքային նշանակություն ունեցող, ինչպես նաև բարձրարժեք գյուղատնտեսական մշակաբույսերի մշակությամբ զբաղվող իրավաբանական և ֆիզիկական անձանց աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Արցախի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 502-Ն որոշմամբ կանոնակարգվում են մեխանիկական եղանակով մատակարարվող ոռոգման ջրի համար ծախսված էլեկտրաէներգիայի արժեքի սուբսիդավորմանն ուղղված միջոցառումների իրականացման հետ կապված հարաբերությունները:

Կարգի շրջանակներում սուբսիդավորման պարտադիր պայման էր հանդիսանում այն, որ գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգումն իրականացվի ոռոգման ժամանակակից ջրախնայողական տեխնոլոգիաներով: Արդյունքում բանջարաբոստանային մշակաբույսեր և խաղողի այգիներ մշակող բազմաթիվ տնտեսություններ դուրս են մնացել սույն կարգի շրջանակներում իրականացվող սուբսիդավորման ծրագրից, քանի որ նրանց կողմից ոռոգումը ջրախնայողական տեխնոլոգիաներով չի իրականացվում:

Նպատակը և բնույթը

Սույն որոշման նախագծի նպատակն է գյուղատնտեսության ոլորտում իրականացնել ճիշտ և գրագետ քաղաքականություն՝ ելնելով երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող պարենային ապահովվածության հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունից:

Ակնկալվող արդյունքը

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 502-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման արդյունքում նախատեսվում է նվազ ջրային ռեսուրսներով ոռոգել առավել քանակով բարձրարժեք մշակաբույսեր:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ջրային տնտեսության և ինժեներական մելիորացիայի բաժնի ու իրավաբանական բաժնի կողմից:

Այլ տեղեկություններ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 502-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ա. ԲԱԽՇԻՅԱՆ***

ՏԵՂԵԿԱՆՔ

*«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 502-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 502-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

*«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 502-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 502-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ա. ԲԱԽՇԻՅԱՆ***

ԻՐԱՎԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 502-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 502-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Լ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

ԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 502-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

ԱՀ կառավարության որոշումն ուղարկել՝

1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ արդարադատության նախարարություն
3. ԱՀ ֆինանսների նախարարություն

Նախագիծը պատրաստողը՝

Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ջրային տնտեսության և ինժեներական մելիորացիայի բաժին

_____ ***Վ. Բալայան***

(ստորագրությունը)